# ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ 2030 Թ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Երիտասարդների ներգրավումը Եվրոպայի խորհրդի արժեքների մեջ

Ցանկացած ժողովրդավարական հասարակության կայունությունը հիմնված է նրա երիտասարդների ստեղծագործականության, ակտիվության, սոցիալական հանձնառության և կարողունակությունների վրա։




Youth – Jeunesse

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE



Երիտասարդ գործակիցների (երիտասարդ առաջնորդների և երիտասարդական աշխատողների) **կարողությունների զարգացում**

Ֆինանսական աջակցություն երիտասարդական **քաղաքացիական հասարակության զարգացմանը**

Որակի զարգացում և **չափանիշների սահմանում** երիտասարդական քաղաքականության ոլորտում

**Միջկառավարական համագործակցություն** համաեվրոպական մակարդակում՝ Եվրոպայի խորհրդի չափանիշների վրա հիմնված երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման համար




**Աջակցություն անդամ պետություններին,** մասնավորապես երիտասարդական քաղաքականության խորհրդատվական առաքելությունների և բազմակողմանի ու երկկողմանի աջակցության այլ միջոցներով

## Մեր տեսլականը

- Երիտասարդական հատվածի նպատակն է «հնարավորություն ընձեռել երիտասարդներին ամբողջ Եվրոպայում ակտիվորեն պահպանել, պաշտպանել, խթանել Եվրոպայի խորհրդի հիմնական արժեքները (մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և օրենքի գերակայություն) և օգուտ քաղել դրանցից»:

## Մեր սկզբունքները

- փոխադարձ հարգանք
- վստահություն
- ներառականություն
- կայուն հանձնառություն
- մասնակցություն
- արդարություն
- թափանցիկություն
- գործակցություն



# Նախարարների կոմիտեի (2020)2 բանաձևը Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի 2030թ. ռազմավարության մասին




## Մեր առաքելությունը

- **Երիտասարդության մասնակցության ընդլայնում**

  … որպեսզի երիտասարդները սոցիալական և քաղաքական լայն համաձայնության հիման վրա նշանակալի մասնակցություն ունենան որոշումների կայացմանը բոլոր մակարդակներում՝ ի աջակցություն մասնակցային կառավարման և հաշվետվողականության:

- **Երիտասարդների համար իրավունքների հասանելիության ընդլայնում**

  … որպեսզի երիտասարդները և քաղաքացիական հասարակության բոլոր երիտասարդական կառույցները մարդու իրավունքների և ազատությունների լիարժեք իրացման համար կարողանան ապավինել նպաստավոր միջավայրին՝ ներառյալ որոշակի քաղաքականություններին, մեխանիզմներին և ռեսուրսներին:

- **Երիտասարդության գիտելիքների խորացում**

  … որպեսզի գործնական համայնքներն իրենց ստեղծած գիտելիքով և փորձով աջակցեն երիտասարդների ժողովրդավարական ներգրավվածությանը: .

## Մեր առաջնահերթությունները

- **Բազմակարծ ժողովրդավարության վերակենդանացում**
- **Երիտասարդների հասանելիություն իրավունքներին**
- **Համակեցություն խաղաղ և ներառական հասարակություններում Երիտասարդական աշխատանք**

## Մեր գործիքները

- Համակառավարվող կանոնադրական մարմիններ
- Ստրասբուրգի և Բուդապեշտի եվրոպական երիտասարդական կենտրոններ
- Եվրոպական երիտասարդական հիմնադրամ
- Գործընկերություն Եվրոպական հանձնաժողովի հետ երիտասարդության ոլորտում

Լավ կառավարում և երիտասարդության մասնակցություն **համակառավարման համակարգի** միջոցով, երիտասարդների և կառավարության ներկայացուցիչների համախմբում որոշումներ կայացնելու նպատակով, երիտասարդության ոլորտում համաեվրոպական համաձայնության զարգացման համար հիմնական հարթակի ձևավորում:



**Մեր հասցեն՝**

Եվրոպայի խորհուրդ
Երիտասարդական վարչություն
F-67075 Strasbourg Cedex France


**www.coe.int/youth**
**www.coe.int/en/web/youth/youth-strategy-2030**

Prems 159024

HYE

**www.coe.int**

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE